ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունվարի 2026 թվականի N 0040-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է առաջացել Արարատ համայնքի վարչական տարածքի, գյուղ Ավշար բնակավայրում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ ծածկագիր 03-013-0561-0117 գյուղատնտեսական արոտավայրը բաժանել երկու գույքային միավորի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արարատ համայնքի վարչական տարածքի, գյուղ Ավշար բնակավայրում գտնվող, 03-013-0561-0117 ծածկագիրը կրող 0.65698 հա մակերեսով հողամասը բաժանել 2 միավորի՝ առանձնացվող մաս մեկ 0. 52106հա մակերեսով առանձնացվող մաս երկու 0.13592հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմած հատակագծի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

20 հունվարի 2026 թ.
ք. Արարատ